

**Ց Ա Ն Կ**

**ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈՐՈՇ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ  
 ՄԱՍՆԱԿԻ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ԻՐԱՎՈՒՆՔ ՏՎՈՂ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ  
 ՊԱՇՏՈՆՆԵՐԻ**

1. Սույն ցանկով սահմանվում են կրթության, մշակույթի որոշ կատեգորիաների աշխատողներին «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով մասնակի աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող մասնագիտությունները և պաշտոնները:

N N ը/կ	Կազմակերպության անվանումը	Մասնագիտության, պաշտոնի անվանումը
1	2	3
1.	Պետական հանրակրթական դպրոց, պետական վարժարան, գիշերօթիկ դպրոց և դպրոց- գիշերօթիկ, խուլ- համրերի դպրոց, կույրերի դպրոց, առողջա-բանային դպրոց, մանկական առողջարանին կից դպրոց և ուսումնական խումբ, երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներ, երաժշտական դպրոց- յրթնամյակ, երաժիշտ սաների դպրոց, զինվորական միջնակարգ մասնագիտական դպրոց և ուսումնարան	ուսուցիչ, դասատու (դասվար), զինղեկ, ուսուցիչ-լոգոպեդ (լոգոպեդ), խուլ-համրերի մանկավարժ (սուրդոմանկավարժ), կույրերի մանկավարժ (տիֆլոմանկավարժ), մանկավարժ- դաստիարակ, դաստիարակ-ղեկավար (դաստիարակ), ավագ ջոկատավար(մանկապատանեկան կոլեկտիվի կազմակերպիչ), ջոկատավար, լսողական կաբինետի վարիչ, հրահանգիչ, տնօրեն (դիրեկտոր, վարիչ), ուսումնադաստիարակչական (ուսումնական, դաստիարակչական), ուսումնաարտադրական մասի կամ արտադրական ուսուցման գծով տեղակալներ, արտադասարանական, արտադպրոցական աշխատանքների գծով տնօրենի (դիրեկտորի) տեղակալներ (փոխտնօրեններ), կազմակերպիչներ, ուսումնադաստիարակչական (ուսումնական, դաստիարակչական), մասի վարիչներ

2.	Ժողովրդական կրթության բաժին	մեթոդիստ
3.	Բնակչահագործման գրասենյակ	մանկավարժ-կազմակերպիչ (մանկավարժ)
4.	Մանկատուն, մանկական աշխատանքային-դաստիարակչական գաղութ, մանկական ընդունարան և մանկական ընդունման կետ, մանկական ընդունող-բաշխիչներ, լոգոպեդիկ կետ և ստացիոնար, դպրոց-կլինիկա, երեխաների աշխատանքային դաստիարակության հատուկ դպրոց	տնօրեն (դիրեկտոր), վարիչ, ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով (մասով) տնօրենի տեղակալ, ուսուցիչ, մանկավարժ-դաստիարակ, դաստիարակ-ղեկավար (դաստիարակ), խուլ-համրերի մանկավարժ (սուրդոմանկավարժ), մայրեր
5.	Տեխնիկում, միջնակարգ (միջին) մասնագիտական ուսումնական հաստատություն, քոլեջ, այլ տեսակի պրոֆեսիոնալ տեխնիկական կրթության դպրոց և ուսումնարան	Տնօրեն (դիրեկտոր), տնօրենի (դիրեկտորի) տեղակալ, դասատու, ուսուցիչ, մանկավարժ, արտադրական ուսուցման վարպետ (վարպետ-դաստիարակ, վարպետ-դասատու)
6.	Մանկապարտեզ (մանկական օջախ և մանկական հրապարակ) և միացյալ մտոր-մանկապարտեզ	վարիչ (տնօրեն), ղեկավար-դաստիարակ, դաստիարակ, ավագ դաստիարակ, մեթոդիստ-դաստիարակ, մանկավարժ-դաստիարակ, մանկավարժ, մանկավարժ-ղեկավար, ղեկավար, ուսուցիչ, երաժշտական ղեկավար (երաժիշտ-դաստիարակ, երաժշտական աշխատող), բուժքույր-դաստիարակ (քույր-դաստիարակ)
7.	Մանկական կլինիկա, պոլիկլինիկա, հիվանդանոց,	ուսուցիչ, դաստիարակ, մանկավարժ-դաստիարակ, լոգոպեդ, խուլ-համրերի մանկավարժ (սուրդոմանկավարժ)

	առողջարան, դիսպանսեր, մսուր, երեխայի տուն, հիվանդանոց, առողջարան և գաղութի մանկական բաժանմունք	
8.	Մանկապատանեկան դպրոց (մարզադպրոց) և օլիմպիական հերթափոխի ուսումնարան	մարզիչ-մանկավարժ, մարզիչ
9.	Մատենադարան, գրադարան՝ անկախ գերատեսչական պատկանելությունից	տնօրեն, փոխտնօրեն (տնօրենի տեղակալ), գիտական քարտուղար, բաժնի վարիչ (բացի կադրերի բաժնի վարիչից և տնտեսական բաժնի վարիչից), ենթաբաժնի վարիչ, գրադարանի (մասնաճյուղի) վարիչ գրադարանավար, կրտսեր, առաջին կարգի, երկրորդ կարգի, առաջատար, ավագ, գլխավոր գրադարանավարներ մատենագետ, առաջին կարգի, երկրորդ կարգի, առաջատար, ավագ, գլխավոր մատենագետներ մեթոդիստ, ավագ մեթոդիստ, խմբագիր, առաջին կարգի, երկրորդ կարգի խմբագիրներ
10.	Մատենադարան, թանգարան (պատկերասրահ)	Էքսկուրսավար, գիտաշխատող, կրտսեր, ավագ, առաջատար գիտաշխատողներ, վերականգնող նկարիչ, ֆոնդային և գիտահետազոտական բաժինների մասնագետներ
11.	Արխիվային վարչություն, պետական արխիվ, գերատեսչական արխիվ, պետական արխիվի մասնաճյուղ, ներկայացուցչություն, բաժին, լաբորատորիա, արխիվ կարգավորող գրասենյակ	Ֆոնդապահ, ավագ, գլխավոր, առաջին կարգի, երկրորդ կարգի, երրորդ կարգի ֆոնդապահներ, պահպանող, ավագ պահպանող, արխիվագետ, առաջին կարգի, երկրորդ կարգի, երրորդ կարգի, ավագ, առաջատար, գլխավոր արխիվագետներ մասնագետ, առաջին կարգի, երկրորդ կարգի, առաջատար, գլխավոր մասնագետներ գիտաշխատող, կրտսեր, ավագ, առաջատար գիտաշխատողներ արխիվավար (արխիվարիուս), առաջինից

		<p>վեցերորդ կարգի արխիվ կարգավորողներ և բրիգադավարներ</p> <p>հնագիր (պոլեոգրաֆ), առաջին կարգի, երկրորդ կարգի, ավագ, առաջատար, գլխավոր հնագիրներ</p> <p>հնագրագետ (արխեոգրաֆ), առաջին կարգի, երկրորդ կարգի ավագ, գլխավոր հնագրագետներ</p> <p>հսկող վարպետ, ավագ հսկող վարպետ, լաբորանտ, ավագ լաբորանտ, վերականգնող, վարպետ-վերականգնող, ավագ վարպետ-վերականգնող, ախտահանող, վարպետ-ախտահանող, վարպետ-օպերատոր</p> <p>կազմարար, վարպետ կազմարար, ավագ վարպետ-կազմարար, տնօրեն, փոխտնօրեն (տնօրենի տեղակալ), վարիչ, վարիչի տեղակալ, ներկայացուցիչ</p>
--	--	--

**(1-ին կետը լրաց 20.10.16 N 1082-Ն)**

2. Սույն ցանկի 1-ին և 5-րդ կետերով սահմանված՝ մասնակի աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող՝ մանկապատանեկան կոլեկտիվի կազմակերպչի, արտադասարանական, արտադարձական աշխատանքների գծով տնօրենի (դիրեկտորի) տեղակալների (փոխտնօրենների), կազմակերպիչների, արտադրական ուսուցման վարպետի (վարպետ-դաստիարակի, վարպետ-դասատուի) մասնագիտություններով և պաշտոններում աշխատած ժամանակահատվածները մասնակի աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող մասնագիտական ստաժում հաշվառվում են (մասնակի կենսաթոշակը նշանակվում կամ վերահաշվարկվում են) 2016 թվականի հոկտեմբերի 1-ին կամ դրանից հետո ներկայացված դիմումների հիման վրա: Ընդ որում, 2016 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2017 թվականի մարտի 1-ը դիմելու (գրավոր դիմում ներկայացնելու) դեպքում մասնակի կենսաթոշակը նշանակվում է (մասնակի կենսաթոշակի չափը վերահաշվարկվում է) 2016 թվականի հոկտեմբերի 1-ից, բայց ոչ շուտ, քան մասնակի կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու օրվանից:

**(2-րդ կետը լրաց 20.10.16 N 1082-Ն)**

**(հավելվածը լրաց, փոփ. 16.08.12 N 1084-Ն, լրաց 10.01.13 N 3-Ն, փոփ. 23.01.14 N 46-Ն, լրաց 20.10.16 N 1082-Ն)**

**Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար**

**Դ. Սարգսյան**